

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՋԱԲԱՆՈՒՄՆԵՐ

**Համախառն ներքին արդյունք**

*Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ, ներառյալ «չհաշվառվող տնտեսության» ծավալները)* ամսական հաշվարկը կատարվել է, ելնելով տնտեսության ճյուղերի նախորդ տարվա տվյալներից և համապատասխան ճյուղերում ընթացիկ ժամանակահատվածում ստեղծված արտադրանքի ֆիզիկական ծավալների աճի տեմպերից, գների ինդեքսներից: ՀՆԱ-ի հաշվարկում հաշվի են առնված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ) ճյուղային վիճակագրությունների ամփոփ, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացված տվյալները:

ՀՆԱ-ն շուկայական գներով տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի (ՀՆԱ հիմնական գներով) և ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաները) հարկերի գումարն է:

*ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորն* ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունն է նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ:

**Արդյունաբերություն**

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը* արժեքային արտահայտությամբ որոշվում է որպես արդյունաբերական կազմակերպությունների (ներառյալ առանձնացված ստորաբաժանումները) կողմից թողարկված արտադրանքի, կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալների հանրագումար: Արտադրանքի ծավալի մասին տվյալները բերված են ընթացիկ գներով, առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի: Ընդ որում, պատվիրատուի հումքից և նյութերից (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում) թողարկված արտադրանքը, ընթացիկ գներով, արդյունաբերական արտադրանքի ծավալ ներառվում է առանց այդ հումքի և նյութերի արժեքի, իսկ համադրելի գներով՝ ներառյալ դրանց արժեքը:

Կազմակերպության կողմից թողարկված արտադրանքի ծավալը որոշվում է առանց ներքին շրջանառության արժեքի: Կազմակերպության ներքին շրջանառություն է համարվում արտադրված պատրաստի իրերի և կիսաֆաբրիկատների այն մասի արժեքը, որն օգտագործվում է տվյալ կազմակերպության կողմից սեփական արդյունաբերա-արտադրական կարիքների համար:

*Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը* բնութագրում է արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկայի փոփոխությունն արժեքային արտահայտությամբ: Հաշվարկվում է արտադրանքի ծավալները համադրելիության բերելու միջոցով: Արտադրանքի գնահատականը, համադրելի գներով, իրականացվում է անմիջականորեն կազմակերպություններում՝ արդյունաբերողների գների հիման վրա: Որպես կշիռ ընդունվում են ընթացիկ տարվա գները:

*Իրացված արտադրանքի ծավալը* հաշվետու ժամանակաշրջանում իրացված սեփական արտադրանքի, ինչպես նաև պատվիրատուի կողմից ընդունված, կատարված աշխատանքների և ծառայությունների արժեքն է՝ անկախ այն բանից, թե դրանց վճարները կազմակերպության հաշվարկային հաշվին մուտքագրվել են, թե ոչ:

*Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ*, որպես կանոն, բերվում է ըստ արտադրանքի համախառն թողարկման, այսինքն ներառյալ կազմակերպության ներսում արդյունաբերա-արտադրական կարիքների համար ծախսված և պատվիրատուի հումքից թողարկված արտադրանքը:

*Սպառողական ապրանքների թողարկումն արժեքային արտահայտությամբ* արտացոլում է պարենային ապրանքների, ալկոհոլային խմիչքների և ոչ պարենային ապրանքների արտադրությունն արտադրողի բացթողման գներով, առանց ավելացված արժեքի և

ակցիզային հարկերի: Սպառողական ապրանքներին են դասվում արտադրանքի այն տեսակները, որոնց մեծ մասն օգտագործվում է բնակչության կողմից վերջնական սպառման համար: Արտադրանքի այն տեսակները, որոնք կարող են օգտագործվել ինչպես արտադրական, այնպես էլ ոչ արտադրական սպառման համար, սպառողական ապրանքներին են դասվում այն մասով, որն օգտագործվում է ոչ արտադրական սպառման համար: Սպառողական ապրանքների արտադրության ծավալների ինդեքսները հաշվարկվում են համադրելի գներով:

**Գյուղատնտեսություն**

*Գյուղատնտեսության համախառն արտադրանքը* բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի գումարն է արժեքային արտահայտությամբ՝ տվյալ տարվա ընթացիկ գներով: Ցուցանիշը հաշվարկվում է գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող իրավաբանական անձանցից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև ընտրանքային դիտարկման (7638 գյուղացիական տնտեսություններ) տվյալներով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կազմում չեն ընդգրկվում անտառաբուծության, ձկնորսության և ձկնաբուծության ու որսորդության ծավալների արժեքները:

*Բուսաբուծության համախառն արտադրանքը* ներառում է հաշվետու տարում.

- ստացված հացահատիկի և հատիկաընդեղենի, տեխնիկական մշակաբույսերի (յուղատու մշակաբույսերի սերմեր, վուշ, կանեփ, շաքարի ճակնդեղ, ծխախոտ, մախորկա և այլն), կարտոֆիլի, բանջարաբուստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, կերային մշակաբույսերի արտադրանքի, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի և բազմամյա տնկարկների տնկանյութի և այլնի արժեքը,
- բազմամյա տնկարկների հիմնման և մշակման արժեքը,
- բուսաբուծության արտադրանքի անավարտ արտադրության փոփոխության արժեքը (աշնանացանի, ցրտահերկի բարձրացման և այլ աշխատանքների ծախսերը, որոնք կատարվում են հաշվետու տարում՝ հաջորդ տարվա բերքի տակ):

*Անասնաբուծության համախառն արտադրանքը* ներառում է հաշվետու տարում.

- անասնի աճեցումից ստացված մթերքի (միս, կաթ, բուրդ, ձու և այլն) արժեքը,
- անասնի, թռչնի և այլ անասնատեսակների աճեցումից ստացված արժեքը (ծնի, հավելաճի և քաշաճի արժեքը), առանց իրացված մսի արժեքի,
- մեղվաբուծության արտադրանքի արժեքը և այլն:

**Անտառային տնտեսություն**

Ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ից: Այն իր մեջ ներառում է հետևյալ ցուցանիշները.

- անտառաբուծություն, որը ներառում է անտառապատման և անտառվերականգնման, խնամքի և սանիտարական հատումների, սերմնային, տնկարանային տնտեսության գործունեության արտադրության ծավալները,
- փայտամթերում, որը ներառում է շինափայտի, վառելափայտի, երկրորդական օգտագործման կոճղերի, խեժերի, դաբաղային նյութերի, ամանորյա տոնածառների և հյուսած արտադրատեսակների արտադրության ծավալները:
- վայրի բույսերի և անտառային մթերքների մթերում, որը ներառում է հավաքված վայրի պտղի, սերմերի, բուսական հյութերի և հանուկների, մամուռի, քարաքոսի և դեղաբույսերի արտադրության ծավալները:

- անտառաբուծության և փայտամթերումների բնագավառում ծառայությունների մատուցում, որը ներառում է անտառաշինության և անտառի կառավարման մշակված ծրագրերի, սերմերի և տնկանյութի որակափոխման, անտառի ավիացիոն պաշտպանության, պահպանության, անտառմեղիորատիվ, հակահրդեհային և այլ աշխատանքների (ծառայություններ) արտադրության ծավալները:

**Ձկնորսություն և ձկնաբուծություն**

Ոլորտի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է առափնյա կամ ներքին քաղցրահամ ջրերում, բաց ծովում ձկների, խեցեմորթերի (խեցգետին, ծովախեցգետին, օմար, մանր ծովախեցգետին (կրեվետկա), լանգուստ) և կակղամորթերի, կրիաների, իժերի, ծովային ոզնիների, բնական մարգարտի, սպունգերի, ջրիմուռների և նմանատիպ այլ ծովամթերքի որս իրականացնող, ինչպես նաև ձկնաբուծարաններից և ձկների կլիմայավարժեցմամբ ու ձկնամեղիորատիվ աշխատանքներով, նորածին մանրաձկների, մանր ծովախեցգետինների, ջրիմուռների և ուրիշ ուտելի ծովաբույսերի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից:

**Շինարարություն**

**Հիմնական միջոցները** կազմում են Հայաստանի ազգային հարստության կարևորագույն մասը: Հիմնական միջոցներ են հանդիսանում շենքերը, շինությունները, մեքենաներն ու սարքավորումները (բանվորական և ուժային մեքենաներն ու սարքավորումները, չափիչ և կարգավորիչ փորձասարքերն ու հարմարանքները, լաբորատոր սարքավորումները, հաշվողական տեխնիկան), փոխադրամիջոցները և հիմնական միջոցների այլ տեսակներ:

Հիմնական միջոցների մեջ են ներառվում նաև պետական և մասնավոր հատվածների կազմակերպությունների բոլոր հիմնական միջոցները, ինչպես նաև ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները: Այդ միջոցների մեջ ներառվում են բնակելի շենքերը, բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների (տնտեսական շենքեր, գյուղտեխնիկա) հիմնական միջոցները:

**Հիմնական միջոցների գործարկման** ցուցանիշի մեջ ներառվում են շինարարությունն ավարտված և շահագործման հանձնված կազմակերպությունների, արտադրական և ոչ արտադրական նշանակության շինությունների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տիպի տրանսպորտային միջոցների (մոնոտաժվող և չմոնոտաժվող, շինարարության նախահաշվի մեջ մտած և չմտած) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ, հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի որակի լավացման հետ կապված կապիտալ ծախսերը և հիմնական միջոցների արժեքների մեծացման հետ կապված այլ ծախսեր:

**Շինարարության ծավալում** ընդգրկվում են նոր շինարարության, գործող արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրային և այլ կազմակերպությունների վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման, շենքերի ամրացման, վերանորոգման, եկեղեցաշինության, բնակարանային, սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների շինարարության աշխատանքների արժեքները, բոլոր տեսակի սարքավորումների տեղադրման, գործիքների, գույքի ձեռքբերման համար կատարված կապիտալ ծախսերը և այլ շինարարական աշխատանքներ:

Շինարարության ծավալն արտահայտվում է համապատասխան տարվա ընթացիկ ծախսերի գներով:

**Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը** կազմված է բնակելի շենքերի մակերեսից և մշտական տիպի հանրակացարանների, ծերանոցների, մանկատների և գիշերօթիկ դպրոցների ննջարանային տարածությունների բնակելի մակերեսից և օժանդակ տարածությունների մակերեսից :

Օժանդակ տարածությունների թվին են պատկանում բնակարանի ներսում գտնվող խոհանոցը, միջանցքները, սանհանգույցները, լողասենյակները, հանդերձարանները, պահեստները, պահարանները: Հանրակացարաններում, բացի վերը նշվածներից, օժանդակ տարածությունների թվին են պատկանում նաև մշակութակենցադային նշանակության և բժշկական ծառայությունների տարածությունները: Օժանդակ տարածությունների մեջ են մտնում փակ պատշգամբները, լոջաները, երկարավուն պատշգամբները, եթե դրանք նախատեսված են նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշներով:

Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի մեջ չեն մտնում նախասրահների, նախամուտքերի, աստիճանավանդակների, ընդհանուր միջանցքների մակերեսները, ինչպես նաև բնակելի շենքերին կից կառուցված ոչ բնակելի շենքերի մակերեսները:

**Տրանսպորտ**

**Տրանսպորտը** բովանդակում է ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակները:

**Ընդհանուր օգտագործման տրանսպորտն** իրականացնում է տնտեսության ճյուղերի և բնակչության բեռների, ինչպես նաև ընդհանուր օգտագործման երթուղիներով ուղևորների փոխադրումները:

**Ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտն** իրականացնում է տվյալ կազմակերպության բեռների փոխադրումները (ավտոմոբիլային տրանսպորտի համար՝ ավտոտրանսպորտային միջոցներով, երկաթուղային տրանսպորտի համար՝ ոչ ընդհանուր օգտագործման մերձատար ուղիներով), ինչպես նաև ավտոտրանսպորտով տվյալ կազմակերպության աշխատողների փոխադրումները (ներտնտեսական և ծառայողական):

Ընդհանուր օգտագործման տրանսպորտի հիմնական ցուցանիշներն են **բեռների փոխադրումների ծավալը (տոննա), բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետր), ուղևորների փոխադրումների ծավալը (ուղևոր) և ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր):**

**Փոխադրված բեռների (բեռնափոխադրումներ) ծավալում** ներառվում է փոխադրված բեռների փաստացի քանակը, հաշվի առած տարալի կամ կոնտեյների քաշը:

**Բեռնաշրջանառությունը (տոննա-կիլոմետրերով)** հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի (տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

**Ուղևորափոխադրումների ծավալում** ներառվում է տրանսպորտային միջոցներով փաստացի փոխադրված ուղևորների թվաքանակը (ներառյալ անվճար երթևեկության իրավունքներից օգտվող ուղևորները):

**Ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր)** հաշվարկվում է փոխադրված ուղևորների թվաքանակի և մեկ ուղևորի փոխադրման միջին հեռավորության արտադրյալների հանրագումարով:

**Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրման (փոխադրված ուղևորների թվաքանակը)** և ուղևորաշրջանառության ծավալները որոշվում են ըստ հաղորդակցության առանձին տեսակների՝ ներքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական:

**Կապ**

**Կապի ոլորտը ներառում է՝**

**փոստային և սուրհանդակային ծառայությունները.**

- ազգային փոստի բաժանմունքներից և հասարակական փոստարկղներից փոստի, ծանրոցների, ծանրոցածրարների (բանդերոլների), փաթեթների հանում, տեսակավորում, բաշխում, տեղավորում և տեղ հասցնում,
- փոստարկղների վարձակալում և «ցպահանջ» թղթակցության մշակում,
- փոստային նամականիշերի, բացիկների, ծրարների վաճառք,
- պայմանագրային հիմունքներով պարբերական մամուլի տարածում,
- հատուկ կապի և կառավարական սուրհանդակային (ֆելդեգերային),
- ազգային փոստից բացի այլ կազմակերպությունների կողմից նամակների, ծանրոցների և ծանրոցածրարների (բանդերոլների) հանում, տեղափոխում, տեղ հասցնում,

**հեռահաղորդակցության (ծայնի, նշանի, ազդանշանի, գրավոր տեքստի, պատկերի հաղորդում լարային, մալուխային, օպտիկական, մագնիսական և այլ էլեկտրամագնիսական համակարգերի միջոցով) ծառայությունները.**

- հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում,
- հեռախոս,
- հեռագիր,
- տվյալների հաղորդում և ինտերնետ հասանելիության,
- տելեմատիկ (հեռաֆաքս, հեռատեքստ, տելեքս),
- շարժական,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման :

**Առևտուր և այլ ծառայություններ**

**Առևտրի շրջանառությունը** ներառում է մանրածախ առևտրի շրջանառությունը, մեծածախ առևտրի շրջանառությունը և ավտոմեքենաների առևտուրը :

**Մանրածախ առևտրի շրջանառությունը** վերջնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար նախատեսված սպառողական ապրանքների վաճառքն է արժեքային արտահայտությամբ, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի:

Մանրածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ձևավորվում է խանութների, կրպակների, սպառողական ապրանքների շուկաների, գյուղատնտեսական արտադրանքի շուկաների և առևտրի այլ օբյեկտների միջոցով իրականացված առևտրի շրջանառության հիման վրա:

**Մեծածախ** է համարվում առևտրի այն տեսակը (գործունեությունը), երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում դրանց հետագա վերավաճառքի համար այլ վաճառողներին, վերանշակողներին, բայց ոչ վերջնական սպառողներին՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթերով:

Մեծածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ներառում է նաև արտահանման ծավալները (բացառությամբ արտադրողների կողմից անմիջական արտահանումը):

**Ավտոմեքենաների առևտուրը** ներառում է ինչպես մասնագիտացված առևտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը , այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը:

**Ծառայությունների ծավալն** արտացոլում է մատուցված տարբեր տեսակի ծառայությունների ծավալը և հաշվառվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայությունները, անկախ վճարումից, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի:

Ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է հյուրանոցների և ռեստորանների, տրանսպորտի, զբոսաշրջության գործակալությունների գործունեության, կապի, կոմունալ, սոցիալական, անհատական ծառայությունների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման, անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, ֆինանսական գործունեության, մեքենաների և սարքավորանքի վարձակալման, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի վարձույթի, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի, հետազոտությունների և մշակումների, կրթության, առողջապահության և այլ տեսակի ծառայություններից:

**Գներ**

**Սպառողական գների ինդեքսը** (ՍԳԻ) բնութագրում է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների փաստացի հաստատագրված կազմի արժեքի փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ:

ՍԳԻ հաշվարկման համար Երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում (Արարատի մարզում սկսած 2004թ. փետրվարից) սահմանված մեթոդաբանությամբ, կատարվում է սպառողական գների (սակագների) ամենամսյա դիտարկում:

Ըստ մարզերի, գների դիտարկումը կատարվում է հետևյալ բնակավայրերում.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Դիտարկվող բնակավայրը</i>
Արագածոտն	Թալին
Արմավիր	Վաղարշապատ
Գեղարքունիք	Մարտունի
Լոռի	Վանաձոր
Կոտայք	Հրազդան, Չարենցավան
Շիրակ	Գյումրի
Սյունիք	Կապան
Վայոց ձոր	Եղեգնաձոր
Տավուշ	Դիլիջան
Արարատ	Արտաշատ

Սահմանված է գների դիտարկման հետևյալ կարգը.

Յուրաքանչյուր հետազոտվող բնակավայրում, ամեն ամիս, կատարվում է 470 անվանում (560 ներկայացուցիչներ) սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների դիտարկում (գները դիտարկվում են յուրաքանչյուր ամսվա համար 3 անգամ՝ տվյալ ամսվա 1-ի, 10-ի և 20-ի մոտակա օրերին): Յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության տեսակի համար հետազոտվում է 9-12 առևտրի (ծառայության) կետ: Միայն սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս, յուրաքանչյուր բնակավայրում ամեն մի ապրանքատեսակի համար կատարվում է մինչև 36 գնային դիտարկում: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԱՎԾ կողմից յուրաքանչյուր ամիս հանրապետության մակարդակով գրանցվում և մշակվում է շուրջ 245000 գնային տեղեկատվություն:

Գրանցված գների հիման վրա կատարվում է միջին ամսական գների հաշվարկ՝ ըստ ապրանքատեսակների և ըստ դիտարկվող բնակավայրերի: Դիտարկված տվյալների հիման վրա հաշվվում են միջին գներ տվյալ տարածաշրջանի յուրաքանչյուր ապրանքատեսակի (ծառայության) համար և 10-օրյա ու ամսական կտրվածքով ներկայացվում ՀՀ ԱՎԾ գների և միջազգային համադրումների բաժին, որտեղ ԱՄՅ փորձագետների հետ համատեղ մշակված մեթոդաբանությամբ հաշվարկվում է սպառողական գների ինդեքս: Սպառողական գների ինդեքսը հաշվարկվում է Լասպեյրեսի բանաձևով, բազիսային անփոփոխ կշռվածությամբ, այսինքն հաշվարկվում է զուտ գնային ինդեքս:

Հանրապետության միջին գների մակարդակը կամ գների ինդեքսն որոշվում է որպես առանձին մարզերի գների մակարդակների կամ գների ինդեքսների միջին կշռված մեծություն:

Հետազոտության մեջ ընդգրկված մարզերի և Երևան քաղաքի հանրապետության մեջ ունեցած տեսակարար կշիռները հաշվարկվում են բնակչության թվաքանակի, ընդհանուր ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալներում դրանց տեսակարար կշիռների հիման վրա:

Տնային տնտեսությունների կողմից կատարված ծախսերի կառուցվածքի հիման վրա կատարվել է սպառողական ապրանքների և ծառայությունների ներկայացուցչական ընտրանք՝ սպառողական զանբյուլի ստեղծման, կշիռների հաշվարկման համար:

Սպառման կառուցվածքում կատարվող էական տեղաշարժերի արտացոլմամբ պայմանավորված, պարբերաբար իրականացվել է նաև սպառողական գների ինդեքսի համար օգտագործվող սպառողական զանբյուլում ներառված ապրանքների (ծառայությունների) տեսակների կշիռների վերահաշվարկ՝ հիմք ընդունելով տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտությունների տվյալները: 2006թ. ՍԳԻ-ի հաշվարկներում օգտագործվող կշիռների համար հիմք են հանդիսացել 2004թ. ապրիլից 2005թ. մարտ ամիսներին տնային տնտեսությունների կողմից իրականացված ծախսումների վերաբերյալ տվյալները, ճշգրտված 2005թ. միջին տարեկան գներով:

Հայաստանի Հանրապետությունը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՅ) «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ին (ՏԱՀՍ) անդամակցության կապակցությամբ սկսած 2004թ. ՀՀ-ում սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար որպես բազիսային ժամանակաշրջան ընդունվել է 2002 թվականը, իսկ 2006 թվականից՝ 2005 թվականը:

ԱՄՅ-ի վիճակագրության դեպարտամենտի առաջարկով, ինչը նաև վերը նշված ստանդարտի պահանջներից է, գների ինդեքսի հաշվարկման համար հիմք է ընդունվում անփոփոխ զանբյուլ՝ առնվազն 3-5 տարվա համար, միջնաժամկետ միջակայքում համադրումներ ապահովելու նկատառումներով:

ՀՀ-ում ՍԳԻ-ն հաշվարկվում է տարբեր ժամանակահատվածների՝ նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ տարվա համապատասխան ամսվա, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի (աճողական կարգով) և բազիսային տարվա նկատմամբ:

ՀՀ-ում ՍԳԻ-ը հաշվարկելու համար կիրառվում է Լասպեյրեսի բանաձևի հետևյալ տարբերակը.

$$I_{on} = \frac{\sum \frac{P_{nj}}{P_{n-1,j}} \times P_{n-1,j} Q_{oj}}{\sum P_{oj} Q_{oj}} \times 100$$



$$\text{որտեղ } P_{n-1,j} Q_{oj} = P_{oj} Q_{oj} \times \frac{P_{1j}}{P_{oj}} \times \frac{P_{2j}}{P_{1j}} \times \dots \times \frac{P_{n-1,j}}{P_{n-2,j}}$$

**ՀՀ արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը** (ԱԱԳ) բնութագրում է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների (առանց ավելացրած արժեքի և ակցիզային հարկերի) փոփոխությունը ժամանակի ընթացքում:

Արդյունաբերական արտադրանքի գների փոփոխության դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի բազային կազմակերպությունների տվյալների հիման վրա: Գների գրանցումն իրականացվում է ապրանքների որոշակի ցանկով, որտեղ ներգրավված է հիմնական, որակական հատկանիշներով, օգտագործվող հումքով և արտադրության տեխնոլոգիական գործընթացներով իրար մոտ, առավել ներկայացուցչական արտադրանք: Ըստ արդյունաբերության ճյուղերի և ենթաճյուղերի, գների ինդեքսների հաջորդական փոխկապված հաշվարկների համար, որպես կշռման բազա, օգտագործվում են արդյունաբերական արտադրանքի բազային ժամանակաշրջանի արժեքային տվյալները:

Հայաստանի Հանրապետությունը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ին անդամակցության կապակցությամբ 2004թ. հունվարից սկսած ՀՀ-ում արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ըստ Լասպեյրեսի բանաձևի՝ բազիսային տարվա (2002թ.), նախորդ ամսվա, նախորդ տարվա դեկտեմբերի, նախորդ տարվա համապատասխան ամսվա և նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի (աճողական կարգով) նկատմամբ:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսն** արտահայտում է գյուղմթերք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված մթերքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Այն հաշվարկվում է ՀՀ-ում 7600 գյուղացիական տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի գների ագրեգացման միջոցով՝ ըստ բուսաբուծական և անասնաբուծական մթերքի և ըստ հանրապետության մարզերի: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին ապրանքատեսակների ինդեքսների կշռված մեծություն, ընդգրկված միատեսակ ապրանքախմբում: Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալը:

**Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը** բնութագրում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունների շարժը հաշվետու ժամանակահատվածում՝ բազիսայինի համեմատ: Հաշվարկվում է 7600 գյուղացիական տնտեսությունների կողմից ձեռք բերված 92 անվանում արտադրության միջոցների գնման գների հետազոտման տվյալների հիման վրա:

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը** բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Ագրեգացվում է հանրապետությունում գործող 4 տեսակի՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային բեռնափոխադրումների սակագների հաշվարկված ինդեքսների միջոցով, որը որոշում է տրանսպորտի առանձին տեսակներով բեռնափոխադրումների սակագների շարժն ընթացիկ ժամանակահատվածում բազիսայինի համեմատ՝ առանց հաշվի առնելու տեղափոխվող բեռների կառուցվածքային փոփոխությունների հետ կապված հանգամանքները (բեռի տեսակը, փոխադրման չափը, տեղ հասցնելու արագությունը և այլն): Տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի գծով (ավտոմոբիլային,

երկաթուղային, օդային, խողովակաշարային) գրանցվում է ծառայություն-ներկայացուցչի բեռնափոխադրման սակագինը, ինչով պայմանավորվում է տրանսպորտի կոնկրետ տեսակով առավել հաճախ փոխադրվող մեկ միավոր բեռի (տոննա, խորանարդ մետր) առաքումը փաստացի տարածության վրա (որոշակի երթուղով): Որպես կշռման բազա ընդունվում են որոշակի բազիսային ժամանակահատվածում (հիմնականում՝ նախորդ տարում) բեռների տեղափոխման ծառայությունների դիմաց տրանսպորտային կազմակերպությունների կողմից ներկայացված եկամուտների մասին տվյալները: Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկներն իրականացվում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան:

**Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը** բնութագրում է արտաքին առևտրի ապրանքների գների փոփոխման հաշվին արտահանման և ներմուծման արժեքի փոփոխությունը անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում: Արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսների հաշվարկի համար որպես տվյալների սկզբնական աղբյուր հիմք են հանդիսանում ներմուծման, արտահանման բեռնամաքսային հայտարարագրերը: Ստացված տվյալների գաղտնիությունն ապահովելու համար մշակվում է արտաքին առևտրի ներմուծման (արտահանման) գների ինդեքսների հետագա հաշվարկի համար հատուկ տվյալների բազա: Հաշվարկներին մասնակցող ընտրված ապրանքներին են վերաբերվում այն բոլոր միատարր ապրանքատեսակները, որոնք ծածկագրված են ըստ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳԱԱ) դասակարգչի ութանիշ ծածկագրերի,

- դասակարգված են՝
  - ըստ ապրանքային ենթախմբերի,
  - ըստ ապրանքային խմբերի,
  - ըստ ապրանքային բաժինների,
- ունեն ապրանքի քանակի և արժեքի մասին տվյալներ,
- պարունակում են տեղեկատվություն տվյալ ապրանքն արտահանող կամ ներմուծող երկրի մասին:

Արտաքին առևտրի գների ինդեքսների հաշվարկը տարվում է՝  
4 ուղղություններով՝

- ◆ «Ըստ բոլոր երկրների»,
- ◆ «Ըստ ԱՊՀ երկրների»,
- ◆ «Ըստ ոչ ԱՊՀ երկրների»,
- ◆ «Ըստ Եվրամիության երկրների»:

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի միջին արժեքի ինդեքսի բանաձևը: Դա թույլ է տալիս համադրել ընթացիկ ժամանակաշրջանը բազիսային ժամանակաշրջանի հետ: Միավորի արժեքի գինը կշռվում է բազիսային ժամանակաշրջանի առևտրային հոսքերով, որոնք կարող են տարեց տարի զգալի տատանվել, կորցնել արդիականությունը և նպաստել գների ինդեքսների արհեստական աճին (նվազմանը): Ուստի, այնպիսի բնագավառում ինչպիսին արտաքին առևտուրն է, նպատակահարմար է բազիսային ժամանակաշրջանն ընդունել նախորդ տարին:

2007թ. դեկտեմբերից ՀՀ-ում արտաքին առևտրի գների ինդեքսը հաշվարկվում է ամսական կտրվածքով:

«Ըստ ԱՊՀ երկրների», «ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» ուղղություններում ինչպես ընթացիկ ամսվա, այնպես էլ բազիսային տարվա համար հաշվարկվում է առանձին ապրանքատեսակների ներմուծման (արտահանման) միջին արժեքը (գինը):

$$\overline{P}_i = \frac{V_i}{Q_i}$$

որտեղ՝

$P_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի միջին արժեքն է,

$V_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի ծավալն է գումարային արտահայտությամբ,

$Q_i$  -  $i$ -րդ ապրանքատեսակի քանակն է:

Օգտագործելով տոկոսային փոփոխությունների փոխկապակցման (ազդեգացման) եղանակը, ապրանքային ենթախմբերի ինդեքսների հիման վրա՝ հաշվարկվում են ապրանքային խմբերի, բաժինների միջին արժեքների ինդեքսներ, ինչպես նաև ներմուծման և արտահանման գների ամփոփ ինդեքսներ «ըստ ԱՊՀ երկրների» և «ըստ ոչ ԱՊՀ երկրների» և «ըստ Եվրամիության երկրների» հետևյալ բանաձևով՝

$$I_E = \frac{\sum_{i=1}^n \frac{\overline{P}_{it}}{P_{io}} * W_{io}}{\sum_{i=1}^n W_{io}}$$

որտեղ՝

$I_E$  - յուրաքանչյուր ապրանքային ենթախմբի միջին արժեքի ինդեքսն է,

$P_{it}$  -  $i$ -րդ ապրանքի միջին արժեքն (գինն) է ընթացիկ ամսում,

$P_{io}$  -  $i$ -րդ ապրանքի բազիսային միջին արժեքն (գինն) է:

$W_{io}$  -  $i$ -րդ ապրանքի տեսակարար կշիռն է բազիսային ժամանակաշրջանում:

Հաշվարկված արտաքին առևտրի միջին արժեքի ինդեքսների շարքը կարող է լինել խիստ անկանոն ի հաշիվ առանձին ապրանքատեսակների գների կտրուկ տատանումների: Նման կարգի գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ: Ինդեքսի սահմանային արժեքները հաստատվում են այնպես, որ ապահովեն գնային փոփոխության ճշգրտության անհրաժեշտ մակարդակը՝ բացառելով անհամադրելի տվյալները և հնարավոր սխալները:

Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքատեսակների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով):

Արտաքին առևտրի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Այն մշակելիս հաշվի են առնվել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից արված առաջարկությունները, միջազգային փորձը և համարվում է ԱՄՅ-ի կողմից առաջարկված նախապատվելի տարբերակներից մեկը:

### **Աշխատանք**

*Միջին ամսական անվանական աշխատավարձը* հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների (ներառյալ պարգևավճարները և փոխհատուցումները) ընդհանուր գումարի (ինչպես դրամական, այնպես էլ բնեղեն տեսքով) հարաբերությամբ աշխատողների միջին ցուցակային թվաքանակին և հաշվետու ժամանակաշրջանի ամիսների թվին:

**Իրական աշխատավարձը** բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով, ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Ցուցանիշը հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի հարաբերությամբ՝ նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

**Իրական աշխատավարձի ինդեքսը** հաշվարկվում է միևնույն ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի ինդեքսի և սպառողական գների ինդեքսի հարաբերությամբ:

**Աշխատավարձի ժամկետանց պարտքը** փաստացի հաշվարկված, բայց դեռևս չվճարված աշխատավարձի համախառն գումարներն են (ներառյալ պարզավճարները և փոխհատուցումները)՝ առանց օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պահումները կատարելու: Աշխատավարձի ժամկետանց պարտքի մեջ ներառվում է նաև մինչև հաշվետվության ներկայացման ժամկետը չմարված փոխանցվող պարտքի մնացորդը:

**Աշխատանքային ռեսուրսները** տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության հանրագումարն են, այսինքն՝ ներառում են հանրապետության բնակչության այն մասը, որը փաստացի զբաղված է տնտեսության մեջ կամ զբաղված չէ, բայց իր տարիքային և առողջական դրությամբ ընդունակ է աշխատելու:

Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են.

- աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունից (այսինքն, աշխատունակ տարիքի բնակչությունն՝ առանց I և II խմբի չաշխատող հաշմանդամների և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող չաշխատող քաղաքացիների),

- մինչև 16 տարեկան զբաղված դեռահասներից,
- զբաղված կենսաթոշակառուներից:

**Տնտեսապես ոչ ակտիվ** բնակչության մեջ ներառվում են աշխատանքային տարիքի.

- առկա ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողները և ուսանողները,
- տնային տնտեսությամբ զբաղվածները,
- երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները,
- անծինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում (աշխատունակ կենսաթոշակառուներ (արտոնյալ, հաշմանդամության), սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ և այլն):

**Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը** զբաղված և պաշտոնապես գրանցված գործազուրկ բնակչության թվաքանակների հանրագումարն է:

**Տնտեսության մեջ զբաղված** են համարվում ինչպես վարձու աշխատանք կատարողները՝ դրամական և/կամ բնեղեն վարձատրությամբ (անկախ նրանից աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ միանգամյա), ոչ վարձու աշխատանք կատարողները՝ վարձու աշխատողների ներգրավմամբ կամ առանց վարձու աշխատողների, ովքեր ստանում են եկամուտ գործունեությունից, այնպես էլ անծինք, ովքեր դիտարկվող ժամանակաշրջանում տարբեր պատճառներով աշխատանքից ժամանակավորապես բացակայողները:

Տնտեսության մեջ զբաղված բնակչության թվաքանակի եռամսյակային գնահատումը կատարվում է ըստ հետևյալ աղբյուրների.

- կազմակերպություններում աշխատողների միջին թվաքանակի վերաբերյալ պետական վիճակագրական հաշվետվությունների և առևտրային փոքր և գերփոքր կազմակերպությունների ընտրանքային հետազոտությունից ստացվող տվյալները,
- անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ պետական ռեգիստրի տվյալները,
- թաքնված զբաղվածների վերաբերյալ աշխատուժի ընտրանքային հետազոտու-

թյամբ ստացվող տվյալները,

- գյուղացիական տնտեսություններում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ պետական վիճակագրական հաշվետվություններից ստացվող տվյալները:

**Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության ստանդարտների զբաղված** են համարվում անձինք, ովքեր հետազոտությանը նախորդող շաբաթում կատարել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք՝ նույնիսկ եթե այդ աշխատանքը կազմել է ընդամենը մեկ ժամ՝ վարձատրություն կամ գործունեությունից եկամուտ ստանալու ժամկետից անկախ, տարբեր պատճառներով ժամանակավորապես բացակայել են աշխատանքից, առանց վարձատրության աշխատել են ընտանեկան կազմակերպությունում:

Տնտեսության մեջ զբաղվածներն ըստ իրենց կարգավիճակի, դասակարգվում են վարձու և ոչ վարձու աշխատողների:

**Վարձու աշխատող** են համարվում անձինք, ովքեր աշխատում են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում են դրամական կամ բնեղեն փոխհատուցում՝ աշխատավարձի տեսքով:

**Ոչ վարձու** աշխատողներ են համարվում անձինք, ովքեր ինքնուրույնաբար են իրենց ապահովում եկամտաբեր գործունեությամբ՝ աշխատանքով (գործատու, ինքնազբաղված, ընտանիքի առանց վարձատրության աշխատող անդամ):

**Թաքնված զբաղվածների** մեջ ներառվում են գործատուի հետ բանավոր համաձայնությամբ (առանց պայմանագրի, հրամանի կամ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ փաստաթղթային ձևակերպման) աշխատող վարձու աշխատողները և այն գործատուներն ու ինքնազբաղվածները, ովքեր իրականացնում են չգրանցված տնտեսական գործունեություն:

**Աշխատանք փնտրող** են համարվում, ըստ ՀՀ գործող օրենսդրության, 16 տարին լրացած այն գործունակ անձինք, ովքեր, անկախ զբաղված լինելու հանգամանքից, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայություն:

**Ջրաղվածության պետական ծառայությունում գրանցված գործազուրկ** են համարվում աշխատանք փնտրող աշխատունակ և գործունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի տեսակների), աշխատանքի տեղավորման նպատակով հաշվառված են զբաղվածության պետական ծառայությունում, պատրաստական են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

**Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության ստանդարտների գործազուրկ** են համարվում 15 և բարձր տարիքի անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում միաժամանակ բավարարել են հետևյալ պայմաններին.

- չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք,
- ակտիվորեն փնտրել են աշխատանք, այսինքն՝ դիմել են զբաղվածության պետական ծառայություն, աշխատանք են փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով՝ հետազոտությանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում,
- պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի՝ հետազոտությանը հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:

**Գործազրկության (աշխատանք փնտրելու) միջին տևողությունը** այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին փնտրել է աշխատանք և հաշվարկվում է որպես կշռված միջին մեծություն գործազուրկների դիտարկվող կազմի համար:

**Գործազրկության մակարդակը** հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին:

**Գործատուի հայտարարած աշխատուժի պահանջարկը** թափուր աշխատատեղերի (պահանջվող աշխատողների) քանակն է, որի վերաբերյալ գործատուն հայտնում են զբաղվածության պետական ծառայությանը:

**Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը** հաշվարկվում է զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված աշխատանքային գործունեությամբ չզբաղված քաղաքացիների թվաքանակի և գործատուների կողմից նույն ծառայությանը հայտնած թափուր աշխատատեղերի քանակի հարաբերությամբ:

**Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր**

**Բնակչության դրամական եկամուտները** (առանց լրահաշվարկների) ներառում են վարձու աշխատողների աշխատավարձը, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, կենսաթոշակները, նպաստները, կրթաթոշակները և այլ սոցիալական տրանսֆերտները, արտարժույթի վաճառքից եկամուտները, սեփականությունից եկամուտները՝ ներդրումների, արժեթղթերի, շահաբաժինների տոկոսների տեսքով և այլ եկամուտներ:

**Բնակչության դրամական ծախսերը** (առանց լրահաշվարկների) ներառում են ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը, պարտադիր վճարումները և կամավոր մուծումները (հարկեր և գանձումներ, ապահովագրական վճարներ, հասարակական կազմակերպություններին կատարված մուծումներ, վարկերի դիմաց վճարված տոկոսներ և այլն), ինչպես նաև խնայողությունների հավելածը (նվազումը) արժեթղթերում և ավանդներում, արտարժույթի գնումը և այլ ծախսեր:

**Ֆինանսներ և դրամաշրջանառություն**

**Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգը** բաղկացած է պետական և համայնքների բյուջեներից:

**Պետական և համայնքի բյուջեները**՝ պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:

Բյուջեները կազմվում և կատարվում են ըստ բյուջեների եկամուտների և ծախսերի միասնական դասակարգման:

**Բյուջետային դասակարգումն** ունի հետևյալ կառուցվածքը.

- ա) բյուջեների եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ,
- բ) բյուջեների ծախսեր,
- գ) պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ,

**Բյուջեների եկամուտների աղբյուրները** դասակարգվում են .

- ա) հարկային եկամուտներ,
- բ) տուրքեր (պետական, տեղական),
- գ) ոչ հարկային եկամուտներ,
- դ) եկամուտներ կապիտալի գործառնություններից,
- ե) մուտքեր պաշտոնական տրանսֆերտներից,

**Բյուջեների ծախսերը** դասակարգվում են ըստ՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների (գործառնական դասակարգում),

- ծախսերի տնտեսագիտական բովանդակության (տնտեսագիտական դասակարգում):

**Պետական բյուջեի պակասուրդը** ծախսերի գերազանցման մեծությունն է եկամուտների նկատմամբ:

**Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները** ներքին և արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցներն են.

ա) ներքին,

*այդ թվում`*

- ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) միջոցներ,
- ՀՀ առևտրային բանկերի միջոցներ,
- պետական արժեթղթեր,
- պետական կազմակերպությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից մուտքեր,
- այլ ներքին աղբյուրներ,

բ) արտաքին,

*այդ թվում`*

- միջազգային կազմակերպությունների միջոցներ,
- օտարերկրյա պետությունների միջոցներ,
- այլ արտաքին աղբյուրներ:

**Փողի բազան** ներառում է ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և ՀՀ ԿԲ-ում ոչ բանկային կազմակերպությունների ավանդները (բացառությամբ կառավարության ավանդների): Փողի բազան հավասար է նաև ՀՀ ԿԲ-ի զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների հանրագումարին:

**Փողի զանգվածը** ներառում է շրջանառությունում կանխիկ դրամը և ռեզիդենտ տնտեսության (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

**Ցպահանջ ավանդները** բանկերի պահպանմանը հանձնված և որևէ գործարք իրականացնելիս հանվող միջոցներն են:

**Ժամկետային ավանդները** բանկերում որոշակի ժամկետով ձևակերպվող ավանդներն են:

**Վարկային ներդրումները** բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի գծով մնացորդներն են: Վարկային ներդրումները բաժանվում են կարճաժամկետ (տրամադրված մեկ տարուց պակաս ժամկետով) և երկարաժամկետ (մեկ տարուց ավել ժամկետով):

### Արտաքին առևտուր

**Արտաքին առևտրի վերաբերյալ (արտաքին առևտրի շրջանառություն, արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ)** ցուցանիշների հաշվարկման համար հիմք են հանդիսացել բեռնամաքսային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի տվյալները` ստացված ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից, ինչպես նաև բնական գազի ներմուծման և էլեկտրաէներգիայի արտահանման ու ներմուծման տվյալները` ստացված ՀՀ էներգետիկայի նախարարությունից:

**Արտահանում:** Ապրանքների արտահանումն է այլ երկրներ` ազատ շրջանառության կամ ակտիվ վերամշակման համար: Արտահանման ծավալում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության

ապրանքները: Արտահանված ապրանքների արժեքները հաշվարկված են ՖՕԲ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման:

**Ներմուծում:** Ապրանքների ներմուծումն է այլ երկրներից՝ հանրապետության ներսում ազատ շրջանառության, ակտիվ վերանշակման կամ մաքսային հսկողության ներքո վերանշակման համար: Ներմուծման ծավալում ընդգրկված են արտասահմանյան ապրանքները, որոնք ներմուծվել են հանրապետություն սպառման և վերաարտահանման համար: Ներմուծված ապրանքների արժեքները հաշվարկված են ՍԻՖ գնով՝ ապրանքի արժեքը մինչև ՀՀ սահման, ներառյալ ապահովագրության և տրանսպորտային փոխադրության ծախսերը:

**Արտաքին առևտրի շրջանառություն:** Արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարն է:

**Արտաքին առևտրի հաշվեկշիռ:** Արտահանման (ՖՕԲ) և ներմուծման (ՍԻՖ) ծավալների տարբերությունն է:

**Կիրառվող համակարգը:** Արտաքին առևտրի վիճակագրության վարման համար կիրառվում է արտաքին առևտրի ընդհանուր համակարգ, երբ երկրի վիճակագրական տարածքը հանընկնում է տնտեսական տարածքին:

**Գործընկեր երկիրը:** Գործընկեր երկրի բնորոշման համար արտահանման ժամանակ կիրառվում է ապրանքը վերջին հայտնի նշանակման երկրի, իսկ ներմուծման ժամանակ՝ ապրանքի ծագման երկրի և ապրանքն առաքող երկրի հատկանիշը:

### **Վճարային հաշվեկշիռ**

**ՀՀ վճարային հաշվեկշիռը** վիճակագրական հաշվետվություն է, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: Տնտեսական բնույթի գործառնությունները, որոնք կատարվում են ՀՀ ռեզիդենտների<sup>1</sup> և ՀՀ ոչ ռեզիդենտների միջև, իրականացվում են ապրանքների և ծառայությունների, եկամուտների հոսքերի, ընթացիկ տրանսֆերտների, ինչպես նաև ֆինանսական պահանջների և պարտավորությունների տեսքով:

ՀՀ վճարային հաշվեկշիռը կազմված է 2 հիմնական հաշիվներից՝ **ընթացիկ հաշիվ և կապիտալի և ֆինանսական հաշիվ:** **Ընթացիկ հաշիվում** գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների հետ կատարված գործառնությունները, իսկ **կապիտալի և ֆինանսական հաշիվում**՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հոսքերը, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտները:

Ապրանքների գծով համադրելիությունն ապահովելու համար, վճարային հաշվեկշիռի ապրանքներ հոդվածի արտահանման և ներմուծման ծավալները բերված են ՖՕԲ գնով(առանց բեռնափոխադրման և ապահովագրական վճարների): Մեթոդաբանական առումով, ընթացիկ հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, որը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել սխալների և բացթողումների հոդված:

<sup>1</sup> Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի վճարային հաշվեկշիռի կազմման մեթոդաբանության, ՀՀ ռեզիդենտ է համարվում ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած իրավաբանական անձ կամ ՀՀ տարածքում գործող որևէ այլ կազմակերպություն, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը (ֆիզիկական անձանց համար՝ կենսական շահերի կենտրոնը) հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:



**Ֆինանսական հաշիվը** կազմված է 4 հոդվածներից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներից և պահուստային ակտիվներից: Վճարային հաշվեկշռում օտարերկրյա ներդրումները բերված են զուտ հիմքով, այսինքն օտարերկրյա ներդրումների հոսքեր հանած վճարումներ (ուղղակի ներդրումների դեպքում՝ նաև ներֆիրմային շարժ): Վճարային հաշվեկշռում արտացոլված օտարերկրյա ներդրումները ներառում են ինչպես իրական հատվածում կատարված ներդրումները, այնպես էլ բանկային (ներառյալ ԶԶ ԿԲ) և պետական կառավարման համակարգերով իրականացված ներդրումները :

**Օտարերկրյա ներդրում** է համարվում գույքի ցանկացած տեսակ (այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ (ոչ նյութական ակտիվներ)), որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ԶԶ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով:

**Ուղղակի ներդրում** կատարվում է արտասահմանյան ուղղակի ներդրողների կողմից, որոնք ձգտում են ձեռք բերել ուղղակի ներդրումով իրավաբանական անձի գուծունեության վրա կայուն, տևական ազդեցություն: Ուղղակի ներդրող (ինվեստոր) է համարվում ոչ ռեզիդենտ միավորը, նրա հետ կապված կամ համագործակցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (ընկերությունը), որին պատկանում է ԶԶ ռեզիդենտ միավորի բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 10%-ը: Ուղղակի ներդրումները լինում են **բաժնետիրական կապիտալի, վերաներդրված (ռեինվեստիցիոն) եկամուտների և այլ կապիտալի** տեսքով:

**Պորտֆելային ներդրում** օտարերկրյա ներդրողների այն կապիտալ ներդրումն է, որը թույլ է տալիս օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում ունենալ սահմանափակ ազդեցություն և ստանալ որոշակի շահույթ, որը կարգավորվում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի արժեթղթերի՝ գլխավորապես բաժնետոմսերի (բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող) և պարտքի արժեթղթերի տեսքով:

**Այլ ներդրում** ներդրումների այն մնացած մասն է, որը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են վարկերի՝ դրամական և առևտրային (բացի օտարերկրյա ներդրումով կազմակերպության ստացածն իր անմիջական ներդրող կազմակերպությունից, որն ուղղակի ներդրում է), ավանդների և այլնի տեսքով:

**Միջազգային ներդրումային դիրք**

**ԶԶ միջազգային ներդրումային դիրքը (ԶԶ ՄՆԴ)** վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվության մեջ արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների շնորհիվ:

**ԶԶ ՄՆԴ-ն** սերտորեն կապված է ԶԶ վճարային հաշվեկշռի հետ: ԶԶ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում գրանցվում են բոլոր գործառնությունները, որոնք կապված են արտաքին ակտիվների և պարտավորությունների հետ: Բնականաբար, այդ գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ԶԶ ՄՆԴ-ում արտացոլված արտաքին ակտիվների ու պարտավորությունների պաշարների վրա: Միաժամանակ, կան նաև այլ գործոններ (գների, փոխարժեքի փոփոխություններ), որոնք ժամանակի ընթացքում

հանգեցնում են ակտիվների և պարտավորությունների արժեքի փոփոխության: Այդ փոփոխությունները նույնպես արտացոլվում են ՀՀ ՄՆԴ-ում:

ՀՀ ՄՆԴ-ն արտացոլում է տնտեսության արտաքին ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարները, իսկ ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ այդ ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները (հոսքերը կոնկրետ ժամանակահատվածում):

**Արտաքին պարտք**

**Համախառն արտաքին պարտքը** ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևէ պահին և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:

Արտաքին պարտքը, որպես կանոն, առաջանում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա, ըստ որի մեկ կառուցվածքային միավորը /դեբիտորը / պարտավորություններ է ստանձնում մեկ այլ կառուցվածքային միավորի /կրեդիտորի/ հանդեպ վերադարձնել հիմնական գումարը տոկոսներով կամ առանց տոկոսների, կամ էլ վճարել տոկոսներն առանց հիմնական գումարը վերադարձնելու:

**Պարտքի գործիքները:** Արտաքին պարտքի գործիքների թվին են դասվում պարտքի արժեթղթերը, վարկերը, առևտրային վարկը, կանխիկ դրամական միջոցները և ավանդները, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող ներֆիրմային շարժը (վարկեր, առևտրային վարկեր, փոխառություններ):

Պարտքի գործիքներ չեն համարվում ֆինանսական գործիքների ֆինանսական ածանցյալները, կապիտալի մասնակցության արժեթղթերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող բաժնետիրական կապիտալը և վերաներդրված շահույթը (եկամուտը):

Արտաքին պարտքը հաշվարկվում է ըստ տնտեսության հատվածների, որոնք համաձայն արտաքին պարտքի մեթոդաբանության դասակարգվում են (1) պետական կառավարման մարմիններ, (2) դրամավարկային կարգավորման մարմիններ, (3) առևտրային բանկեր և (4) այլ հատվածներ: Ընդ որում, ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի երաշխիքներով մասնավոր հատվածի կազմակերպությունների ստացված վարկերն ըստ արտաքին պարտքի մեթոդաբանության ներառված են տնտեսության “այլ հատվածի” պարտքի ցուցանիշում:

Արտաքին պարտքի ցուցանիշը ներառում է ոչ միայն հիմնական գումարը, այլ նաև ժամանակահատվածի վերջի դրությամբ հաշվարկված, բայց դեռևս չվճարված տոկոսավճարները:

**Ժողովրդագրություն**

**Մշտական բնակչությունը**՝ մշտապես բնակվող բնակչությունն է, ներառյալ ժամանակավոր (մինչև 1 տարի ժամկետով) բացակայողները:

**Բնակչության բնական շարժը**՝ ծնվածների և մահացածների համակցության ընդհանրացված անվանումն է, այսինքն՝ բնական ճանապարհով բնակչության թվաքանակի փոփոխությունը: Բնակչության բնական շարժի ցուցանիշներին են վերագրվում նաև ամուսնություններն ու ամուսնալուծությունները, որոնք բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ուղղակի ազդեցություն չունեն, սակայն հաշվարկվում են նույն եղանակով:

**Ծնունդների, մահերի, ամուսնությունների, ամուսնալուծությունների** վերաբերյալ ամենամսյա տեղեկությունները ստացվում են ՀՀ արդարադատության նախարարության

քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տարածքային մարմինների կողմից կազմված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերում գրանցված տեղեկությունների հիման վրա: Ծնվածների թվաքանակի մեջ ներառված են միայն կենդանի ծնված երեխաները:

Ընդ որում, 2005թ. հոկտեմբերի 16-ից կիրառության մեջ են դրվել ԱՀԿ սահմանումները՝ «Կենդանածնության, մեռելածնության և պերինատալ շրջանի» վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայմանը համպատասխան (ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 16-ի թիվ 949 –Ն որոշում):

**Կենդանածնություն** է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրսբերումն անկախ հղիության ժամկետից, որից հետո պտուղը շնչում կամ ցուցաբերում է կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են. սրտխփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները, անկախ նրանից, թե արդյոք կտրված է պորտալարը, և (կամ) անջատված է ընկերքը: Այսպիսի ծննդի յուրաքանչյուր արգասիք համարվում է կենդանածին:

ՔԿԱԳ տարածքային մարմիններում գրանցման են ենթակա 500 գ և ավելի քաշով կենդանածնության բոլոր դեպքերը:

**Մեռելածնություն** է համարվում մոր օրգանիզմից բեղմնավորման արգասիքի լրիվ արտամղումը կամ դուրս բերումը, որից հետո պտուղը չի շնչում կամ չի ցուցաբերում կյանքի որևէ այլ նշան՝ ինչպիսիք են. սրտի խփոցը, պորտալարի անոթազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները:

ՔԿԱԳ մարմիններում գրանցվում և պերինատալ մահացության ցուցանիշում ներառվում են 500 գ և ավելի քաշով (22 շաբաթ և ավելի հղիության ժամկետով) մեռելածնության դեպքերը:

**Պերինատալ (շուրջծննդյան) շրջան** սկսվում է պտղի ներարգանդային կյանքի 22 լրացած շաբաթից (154 օրից), երբ ծննդյան քաշը նորմայում 500 գրամ է և ավարտվում է ծննդից 7 լրիվ օր (168 ժամ ) հետո:

**Մահվան պատճառների մասին** տեղեկատվության աղբյուր է հանդիսանում մահվան մասին բժշկի կողմից կազմված մահվան բժշկական վկայագրերում՝ հիվանդության, վնասվածքների, թունավորումների և արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետևանքների վերաբերյալ գրանցումները, որոնք մահվան պատճառ են հանդիսացել: Նշված փաստաթղթերը՝ մահվան վերաբերյալ ակտին կից, վիճակագրական մշակման նպատակով տրամադրվում են վիճակագրական մարմիններին:

Մահվան ակտերի մշակումն ըստ մահվան պատճառների, սկսած 2004 թ.-ից իրականացվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգչի X-րդ վերանայման (ՀՄԴ-10) հիման վրա:

**Ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցները**՝ հաշվետու ժամանակաշրջանում գրանցված, համապատասխանաբար, ծնվածների (կենդանի) թվաքանակի ու մահվան դեպքերի և հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են, որոնք հաշվարկվում են 1000 բնակչի հաշվով:

**Բնական հավելածի գործակիցը**՝ ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցների տարբերությունն է:

**Ամուսնության և ամուսնալուծության ընդհանուր գործակիցները**՝ հաշվետու ժամանակաշրջանում գրանցված, համապատասխանաբար, գրանցված ամուսնությունների ու ամուսնալուծությունների քանակի և տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված

մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են: Հաշվարկվում է 1000 բնակչի հաշվով:

Բոլոր գործակիցների հաշվարկներն իրականացվում են դրանք համապատասխանեցնելով տարվան հավասարազոր հաշվարկին:

**Մանկական մահացության գործակիցը**, եռամսյակային կտրվածքով՝ մինչև 1 տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն ժամանակահատվածում կենդանի ծնվածների թվաքանակին: Տարեկան կտրվածքով (տվյալների մեքենայական մշակման արդյունքով) այն հաշվարկվում է որպես 2 բաղադրիչների գումար: Դրանցից առաջինն այդ տարում ծնվածների սերնդից (որի համար հաշվարկվում է գործակիցը) մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նույն տարում կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակին, իսկ երկրորդը՝ նախորդ տարում ծնվածների սերնդից մինչև մեկ տարեկան հասակում մահացածների թվաքանակի հարաբերությունն է նախորդ տարում կենդանի ծնվածների ընդհանուր թվաքանակին: Հաշվարկվում է 1000 կենդանի ծնվածի հաշվով:

**Երեխաների մահացության գործակիցը (մինչև 5 տարեկան)**՝ հաշվետու ժամանակաշրջանում մինչև 5 տարեկան հասակում մահացած երեխաների թվաքանակի ցուցանիշի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 1000 կենդանի ծնվածի հաշվով:

**Մայրական մահացության գործակիցը**՝ հաշվետու ժամանակաշրջանում հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում արձանագրված մահվան դեպքերի հարաբերությունն է կենդանի ծնվածների թվաքանակի ցուցանիշին: Հաշվարկվում է 100 000 կենդանի ծնվածի հաշվով:

**Առողջապահություն**

**Վարակիչ և տարափոխիկ հիվանդություններ:** Այլ սալմոնելոզային ինֆեկցիաներ՝ ներառում է տոկսիկոինֆեկցիոն հիվանդությունները՝ հարուցված տարբեր սերոտիպի սալմոնելոզներով (սալմոնելոզային գաստրոէնտերիտ և սալմոնելոզի գեներալիզացված ձևերը):

Էնտերիտներ, կոլիտներ, գաստրոէնտերիտներ, սննդային տոկսիկոինֆեկցիաներ՝ հարուցված հաստատված հարուցիչներով՝ ներառում է հաստատված բակտերիալ հարուցիչներով էնտերիտները, կոլիտները, գաստրոէնտերիտները, աղեմովիրուսներով և էնտերովիրուսներով հարուցված էնտերիտները, ինչպես նաև այլ վիրուսային էնտերիտները:

**Շճադրական:** Մարդու իմունային անբավարարության վարակի նկատմամբ իմունոֆերմենտային անալիզի միջոցով կատարված հետազոտություններից երկուսը եղել են դրական:

**Իրավախախտումներ**

**Հանցագործություններ:** Ծանր հանցագործություններ համարվում են՝ հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող դիտավորյալ արարքները:

Հանցագործությունը համարվում է դիտավորյալ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները, ցանկացել է դրանք կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

Տնտեսական հանցագործություններ են երկրի տնտեսության ոլորտում կատարվող հանրորեն վտանգավոր արարքները, որոնք նախատեսված են օրենքով:

**Հարկային հանցագործություններ:** Հարկային հանցագործությունները՝ տնտեսական բնույթի հանցագործություններ են, որոնք որակավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով:

**Մաքսային հանցագործություններ:** Խոշոր չափի մաքսանենգություն համարվում է 4000 ամերիկյան դոլարից բարձր գումար ներկայացնող մաքսանենգությունը:

**Դատական ակտ** առաջին ատյանի վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից կայացրած դատարանի որոշումներն են, դատարանի վճիռներն են և դատավճիռներն են:

**Հարկադիր կատարում** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կատարողական գործողություններն են:

**Փաստացի բռնագանձված գումար** դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված բռնագանձման ենթակա գումարից փաստացի կատարված բռնագանձում:

**Կատարողական վարույթով պետտուրքի բռնագանձում** դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթով նախատեսված ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուրք, որն ենթակա է պարտադիր բռնագանձման:

### **Հաշմանդամություն**

**Հաշմանդամությունը** օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալական անբավարարություն է, որը հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության:

### **Ստանդարտացում**

**Ստանդարտացումն** իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեություն է:

**Սերտիֆիկացում**՝ համապատասխանության հավաստման ընթացակարգ, որի արդյունքով սերտիֆիկացման մարմինը գրավոր հավաստիացնում է արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը նորմատիվ պահանջներին:

**Հավատարմագրումն** ընթացակարգ է, որի միջոցով հավատարմագրման խորհուրդը պաշտոնապես ճանաչում է իրավաբանական անձի իրավասությունը՝ համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև պաշտոնապես ճանաչում է արտադրանք արտադրողից (վաճառողից) կամ ծառայություն մատուցողից այդ իրավաբանական անձի անկախությունը:

**Սերտիֆիկացման մարմինը** որոշակի արտադրանքի կամ ծառայության համապատասխանության հավաստման աշխատանքների կատարման համար հավատարմագրված իրավաբանական անձն է:

**Փորձարկման լաբորատորիան** որոշակի փորձարկումներ իրականացնելու համար հավատարմագրված իրավաբանական անձն է:

### **Բնապահպանություն**

**Բնապահպանական վճարը** բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է:

**Բնօգտագործման վճարը** պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու

նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց ՀՀ պետական բյուջե վճարվող վճարն է:  
**Բնական միջավայրի «արտակարգ բարձր» աղտոտվածություն մթնոլորտային օդի** համար համարվում է սահմանային թուլյատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) գերազանցումը՝

- 20 – 29 անգամ՝ երբ այդ մակարդակը պահպանվում է 2 օրից ավելի,
- 30 – 49 անգամ՝ երբ այդ մակարդակը պահպանվում է 8 ժամից ավելի,
- 50 և ավելի անգամ:

**Բնական միջավայրի «արտակարգ բարձր» աղտոտվածություն մակերևութային ջրերի** համար համարվում է սահմանային թուլյատրելի կոնցենտրացիայի գերազանցումը 100 և ավելի անգամ (այն նյութերը, որոնց համար սահմանված է ջրում լրիվ բացակայություն, որպես ՍԹԿ ընդունվում է 0.01 մկգ/դմ<sup>3</sup>),

- լուծված թթվածնի պարունակության նվազումը մինչև 2 մգ/դմ<sup>3</sup> և ցածր,
- թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջի (ԹԿՊ<sub>5</sub>) պարունակությունը 60 մգ Օ<sub>2</sub>/դմ<sup>3</sup> և ավելի,
- ջրի հոտի մինչև 4 բալ և ավելի ուժեղացումը, որը բնորոշ չէ տվյալ տեղանքի համար,
- 6 կմ<sup>2</sup> տարածությամբ տեսահորիզոնի 1/3-ից ավելի տարածքով որևէ թաղանթի (նավթային, յուղային և այլ ծագման) առկայությունը,
- փափկամարմինների, ձկների, գորտերի և այլ ջրային օրգանիզմների և ջրային բույսերի համատարած ոչնչացումը:

**Բնական միջավայրի «բարձր» աղտոտվածություն մթնոլորտային օդի** համար համարվում է որոշվող միացության պարունակության ՍԹԿ-ից 10 և ավելի անգամ գերազանցումը:

**Բնական միջավայրի «բարձր» աղտոտվածություն մակերևութային ջրերի** համար համարվում է.

- ՍԹԿ-ի գերազանցումը 10-ից մինչև 100 անգամ (նավթամթերքի, ֆենոլների և պղնձի իոնների համար՝ 30-ից 100 անգամ),
- ԹԿՊ<sub>5</sub>-ի կոնցենտրացիայի 15-ից մինչև 60 մգ Օ<sub>2</sub>/դմ<sup>3</sup> պարունակությունը,
- լուծված թթվածնի պարունակության իջեցումը 3-ից մինչև 2 մգ/դմ<sup>3</sup>,
- մինչև 6 կմ<sup>2</sup> տարածությամբ տեսահորիզոնում ջրի մակերևութի 1/4-ից մինչև 1/3 տարածությամբ թաղանթի առկայությունը (նավթային, յուղային և այլ ծագման),
- 6 կմ<sup>2</sup>-ից ավելի տեսահորիզոնում ջրի մակերևութի 1-ից մինչև 2 կմ<sup>2</sup> տարածքով թաղանթի առկայությունը:

### **Գիտատեխնիկական աշխատանքներ**

**Գիտատեխնիկական աշխատանքներ** են գիտական հետազոտությունները և մշակումները, նախագծակոնստրուկտորական, տեխնոլոգիական, շինարարության համար նախագծային աշխատանքները, արտադրանքի փորձամնուշների պատրաստումը և գիտատեխնիկական ծառայությունները:

Գիտական հետազոտություն և մշակում համարվում է գիտական գործունեությունը, որը պարբերաբար իրականացվում է գիտելիքների հարստացման և նրանց փորձնական կիրառության նոր ոլորտների որոնման նպատակով:

Գիտական հետազոտության և դրան հարակից գործունեության տարբերակիչ հիմնական հատկանիշը համարվում է աշխատանքում նորոյթի առկայությունը:

Մշակումներ համարվում են պարբերական աշխատանքները, որոնք հիմնված են հետազոտությունների, փորձի միջոցով ստացված գոյություն ունեցող գիտելիքների վրա և ուղղված են նոր նյութերի, արտադրանքի, պրոցեսների, հարմարանքների, ծառայությունների, համակարգի կամ մեթոդի ստեղծմանը:

**Արխիվային գործ**

*Անձնական ծագման փաստաթուղթը*՝ որևէ անձի, ընտանիքի կամ տոհմի փաստաթղթային ֆոնդի մի մասն է, իսկ մի շարք դեպքերում՝ փաստաթղթային ֆոնդ, որն ընդունված է պետական պահպանության:

*Գիտատեխնիկական փաստաթուղթը*՝ գիտական հետազոտությունների և տեխնիկական մշակումների ընթացքն ու արդյունքները, ինչպես նաև դրանց արտադրության մեջ ներդրման ուղղություններն ու մեթոդներն արձանագրող գիտական և տեխնիկական փաստաթղթերի ամբողջությունն է:

Արխիվային գործունեության մեջ ընդունված *պահպանման միավորը* փաստաթղթերի քանակի հաշվի այն նվազագույն միավորն է, որն իրենից ներկայացնում է փաստաթղթերի ամբողջություն կամ առանձին վերցված փաստաթուղթ, որն ունի ինքնուրույն նշանակություն:

*Գործը*՝ մեկ հարցի կամ գործունեության ոլորտի վերաբերող փաստաթղթերի ամբողջություն է կամ մեկ փաստաթուղթ՝ զետեղված առանձին շապիկի մեջ:

*Գործերի անվանակարգն* իրենից ներկայացնում է հաշվառման փաստաթուղթ, որում նշվում է գործերի վերնագրերն իրենց պահպանության ժամկետներով: